Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-300[1]-30.09.2019-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-164-Ն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական կրթական հաստատություններում ընդունելությունը կատարվում է ***օրենսդրությամբ սահմանված կարգով,*** առնվազն հիմնական ընդհանուր կրթության ունեցող անձանց դիմումներով՝ ըստ ***լիազոր մարմնի կողմից ուսումնական հաստատություններին հատկացված անվճար և վճարովի տեղերի, մրցույթային հիմունքներով: Տարեկան անվճար տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:***»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մայիսի 1-ից:

Տեղեկանք

Նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական կրթության մասին օրենքի լրացվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 11. Ընդունելությունը արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում

1. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական կրթական հաստատություններում ընդունելությունը կատարվում է ***օրենսդրությամբ սահմանված կարգով,*** առնվազն հիմնական ընդհանուր կրթության ունեցող անձանց դիմումներով՝ ըստ ***լիազոր մարմնի կողմից ուսումնական հաստատություններին հատկացված անվճար և վճարովի տեղերի, մրցույթային հիմունքներով: Տարեկան անվճար տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:***»:

Այդ դեպքում միջնակարգ կրթության երրորդ աստիճանի ծրագրերը Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվում են

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով՝ իրենց ընտրությամբ:

2. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունը իրավունք ունի ընդունելություն հայտարարելու լիցենզիայի առկայության դեպքում:

3. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունը պարտավոր է դիմորդին ծանոթացնել իր լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են դիմորդի ընդունելության փաստաթղթերում:

4. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգն ըստ կրթական ծրագրերի սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

5. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կատարվում է կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկին համապատասխան մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Մխիթար Հայրապետյան Հովհաննես Հովհաննիսյան	**Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտա-կան կրթության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի 1-ին հոդված.**	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ « Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական կրթական հաստատություններում ընդունելությունը կատար-վում է առնվազն հիմնական ընդհանուր կրթութ-յուն ունեցող անձանց դիմում-ներով՝ ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված (անվճար) և ***լիազոր մարմնի կողմից ուսումնական հաստատություններին հատկացված*** անվճար և վճարովի տեղերի օրենսդրությամբ սահմանված կարգով, մրցութային հիմունքնեպով »	Սկզբունքը ընդունվել և խմբագրվել է. «Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական կրթական հաստատություններում ընդունելությունը կատարվում է ***օրենսդրությամբ սահմանված կարգով,*** առնվազն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումներով՝ ըստ ***լիազոր մարմնի կողմից ուսումնական հաստատություններին հատկաց-ված անվճար և վճարովի տեղերի, մրցույթային հիմունքներով: Տարեկան անվճար տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների, հաստատում է ՀՀ կառավարության:***»:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Մխիթար Հայրապետյան, Հովհաննես Հովհաննիսյան	**«Կրթության մասին» օրենքի 1-ին հոդված**	«անվճար» բառից հետո լրացնել **«*և վճարովի*»** բառերը.	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացում	Ընդունվել է